ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

№ «ՇՀԱՊՁԲ-15/22 (ԶԿՀ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Կապան

«28» հուլիսի 2016թ.
ժամը 11 50

Մասնակցում էին՝

Կ.Կիրակոսյան — «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն,

Հանձնաժողովի անդամներ՝

Ս.Գրիգորյան — «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի առաջին տեղակալ,

Ս.Մարգարյան — «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գլխ. հաշվապահ,

Ն. Ալեքսանյան — «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հաշվապահ,

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Գրիգորյան — «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գնումների ընթացակարգի մասնագետ:

1. «ՇՀԱՊՁԲ-15/22 (ԶԿՀ-ԱՊՁԲ-16/02)» **ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին.**
(Կ. Կիրակոսյան)

Հաշվի առնելով «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազ ձեռք բերելու համար հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/22 (ԶԿՀ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով ՇՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 25.07.2016թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված ծածկագրով մրցույթի մասնակիցներ՝ «Արկարգազ» ՍՊԸ-ի և «Վիլլա Գազ» ՍՊԸ-ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ՀՀ ՖՆ ՏՏԵՆԶ վարչության աշխատակից Ա.Պապոյանի կողմից 28.07.2016թ.-ի դրությամբ տրվել է դրական եզրակացություն: Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետի, «Արկարգազ» ՍՊԸ-ի և «Վիլլա Գազ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

2.1. Հաղթող ճանաչել 1-ին չափաբաժնով՝ «Արկարգազ» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնով՝ «Վիլլա Գազ» ՍՊԸ-ին:

2.2. Վերոնշյալ ընկերություններին ներկայացնել պայմանագրի կնքման առաջարկ:

2.3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը անգործության ժամկետ չի սահմանավում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝ **Կ. Կիրակոսյան**

Հանձնաժողովի անդամներ՝ **Ս.Գրիգորյան**

Ս.Մարգարյան

Ն.Ալեքսանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա. Գրիգորյան**